



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ Արարատի մարզ. Գ.Արբաթ (093) 90 98 99

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ապրիլի 2014 թվական N 6- Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի **ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը՝ (այսուհետ՝ Գլխավոր հատակագիծ) համաձայն հավելվածի.

2. Պարզեցված գլխավոր հատակագծով սահմանված հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Կառուցապատման համար նախատեսված տարածքների բաշխումն ըստ

նպատակային նշանակության փոփոխությունների» գծագրին և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

N	Առկա նպատակային նշանակությունը	Տարածքի մակերեսը	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային նշանակությունը	Տարածքի մակերեսը (հա)
1	2	3	4	5
Առաջնահերթ (մինչև 5 տարի)				
I	գյուղատնտեսական հողեր, որից		բնակավայրերի հողեր	7.36
1	վարելահող	6.95	բնակելի կառուցապատում	6.95
2	վարելահող	0.24	ընդհանուր օգտագործման հողեր	0.24
3	այլ հողեր	0.17	ընդհանուր օգտագործման հողեր	0.17
Ընդամենը ընդհանուր օգտագործման հողեր				0.41
Միջնաժամկետ (մինչև 5-10 տարի)				
I	գյուղատնտեսական հողեր, որից		բնակավայրերի հողեր	2.39
1	վարելահող	2.26	բնակելի կառուցապատում	2.26
2	վարելահող	0.13	ընդհանուր օգտագործման հողեր	0.13
II	Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ. օբ., որից		բնակավայրերի հողեր	3.04
1	արտադրական	3.03	հասարակական կառուցապատում	3.04
Ընդամենը				5.42
Հեռանկարային (մինչև 10-15 տարի)				
I	գյուղատնտեսական հողեր, որից		բնակավայրերի հողեր	0.66
1	վարելահող	0.66	բնակելի կառուցապատում	0.66
II	Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ. օբ., որից		գյուղատնտեսական հողեր	1.46
1	արտադրական	1.46	արոտ	1.46
Ընդամենը				2.12

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել պարզեցված գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի

